

Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

Տարեկան	10	Փրանք
Բաժանորդագրին կ'ընկնի վճարելի		



To the DICKENS PUBLISHING COMPANY
301 East 34th St., New York City.

Entered at the Post Office at New York as
Second-Class Mail Matter.

Խմբագրութեան ղրկուած ծրար
կամ նամակ ետ չեն ղրկուիր:

ՄԱՐԿԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Խաչ և յաղթանակը. — Ամերիկայի Հայ մամուլը. — Տգիտութիւնն Հայուն թշնամին. — Ազգային քրոնիկ. — Նամակ Թաւրիզէն (Պարսկաստան). — Նամակ Ֆիշպուրկէն. — Նամակ Լինքն. — Նամակ խմբագրութեան. — Ներքին լուրեր. — Հեռագրեր. — Բանասիրական (Եթեր, անթել հեռագրեր):

ԽՍՁ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ

Թքել Զօրայի վրայ... կործանի՞ Զօրա... կաղաղակէր ամբողջ ու կը քարկոծէր ճշմարտութեան պաշտպանը: Երկու տարի անցաւ: «Կեցցէ՛ Զօրա» կը կանչէ ամբողջ աշխարհը: Մեծ յաղթանակի հրացունն է ատ: Գանի մը տարի առաջ Ֆրանսացի հրէայնացի սպայ մը, Տրէյֆուրը, խաչին վրայ կը բարձրանար, աշխարհի համար մեռած էր ալ նա, մեռած էր բարոյապէս, դաւաճանի, մատնիչի մահով, «Մատանայ» ի կղզի տանջարանին մէջ, անգիտակից իր վիճակին, բայց ո՛չ խղճահար:

Զայն բարձրացաւ, ամբողջ աշխարհը վրդովեց, մինչև անգամ խաւարակուռ Ռուսիոյ էն խաւարամիտ մամուլն յիշեց տանջարանի անմեղ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե Թ Ե Ր

Անթել հեռագրեր

Անթել հեռագրի գիւտն գրեթէ ամբողջ աշխարհի զարմացման առարկայ եղած է: Եթեր կոչուած նիւթին գոյութիւնն է որ կարելի կընէ զայն: Եւ անկարելի է ազօտ գաղափար մ'իսկ կազմել այս գիւտին նկատմամբ, առանց տարրական ծանօթութիւն մը ունենալու եթերի վրայ: Ուստի անօգուտ չպիտի ըլլայ կը յուսամ համառօտակի գրել այս նիւթին վրայ:

Երկնի անհուն միջոցն լի է աստղերով, սակայն անբարոյն ճեղքուողութիւններ կան անոնց միջև: Բացարձակապէս դատարկ է աստղային բիւր բանակաց միջև գտնուող այս անչափելի տարածութիւն: Ասկէ դար մը առաջ գիտունք նեոտոնեան տեսութեամբ «Ոչ» պիտի պատասխանէին, «վասնզի լուսոյ աննշմարելի մասնիկներ անդադար կը հոսին միջոցի մէջը»: Ըստ այս տեսութեան եթէ աստղերը բացարձակապէս դադարէին լոյս արձակելէ, անոնց միջև գտնուող միջոցն ալ բացարձակապէս դատարկ պիտի ըլլար: Լուսոյ մասնիկները միայն կը լեցնեն զայն: Այժմ լուսոյ էութեան նկատմամբ հիմնապէս փոխուած է մեր տեսութիւնը:

դատարարեալը, առանց նայելու, որ իր շուրջը, Սիպր լի էին Տրէյֆուրներով: Վերջապէս արդարութեան ձայնը լսուեցաւ, ու այդ ձայնը հասաւ մինչև Սատանայի կղզին ու հոն խաչէն վար առաւ խաչեալ մը: Այսօր Տրէյֆուրը դէպի Բարիզ կուղևորի:

Տասնինն դար... և վերջին րոպէին առաջին անգամն է որ խաչէն վար կանոնի անմեղը, առաջին անգամն է որ նա պիտի խօսի այն խուժանին հետ, որ «ի խաչ հան զքա» կաղաղակէր:

Յիրաւի, սխալ չէ, տասնիններորդ դարու ամենամեծ յաղթանակըն է սա:

* *

Տրէյֆուրը խաչէն վար կանոնի, և մարդիկ ճիշդ նոյն միջոցին Զօրանտիոյ մայրաքաղաքը հաւաքուած կուղեն խաչը վերցնել աշխարհէս: Ի՞նչ է պատերազմը, եթէ ո՛չ մեծ խաչ մը, որուն վրայ կը գամուին ամբողջ ժողովուրդները: Բայց մի՛ հաւատաք, Պիղատոսն ըսու ժողով մըն է այդ: Մէկին տեղ շատեր են այժմ: Ասոնք պիտի տեսնան մարդկութեան տառապանքը, պիտի խոստովանին խաչին, — պատերազմին — շարքը, բայց հաւատացէ՛ք ձեռքերն իրար լուան և թողուն որ Մարգը խաչին վրայ մնայ:

* *

Բայց խաչէն վերջ յաղթանակ մը

գիտական բազմաթիւ փորձերով վերջնականապէս հաստատուած է թէ լոյսը փոքրիկ մասնիկաց հեղեղ մը չէ նաև, այլ սոսկ անտեսելի նիւթի ծածանումն: Զայնը օդի շարժումն է, որ մեծ ականջին զարնուելով՝ ձայնի մտապատկերը կարտադրէ մեր մտաց մէջ: Լոյսն ալ նիւթի մը շարժումն է, որ մեր աչաց զարնուելով՝ լուսոյ մտապատկերը կարտադրէ մեր մտաց մէջ: Առանց օդի ձայնը գոյութիւն չունի. ու եթէ լոյսն ալ շարժում մ'է ինչպէս գիտութիւնն կը հաստատէ, ուրեմն անհերքելի է նիւթի մը գոյութիւնն որոյ մէջը կընթանան լուսոյ այս անհամար շարժումները: Այս նիւթը կը կոչուի եթեր:

Զկարծուի բնաւ թէ եթերի գոյութեան գաղափարն գիտնականաց կողմէ հնարուած ազօտ տեսութիւն մ'է սոսկ ուրիշ տեսութեանց նման: Անոր իրականութեան նկատմամբ բազմաթիւ գիտնականք այնքան հաստատապէս համոզուած են, որքան արեւի և լուսոյ գոյութեանը: Յիրաւի այնքան զօրաւոր փաստեր կան թէ՛ եթեր կոչուած նիւթն կը լեցնէ աստղային մարմնոց միջև եղող տարածութիւնն որքան թէ՛ մթնոլորտ մը կը շրջապատէ երկիրը: Մեքենական որոշ յատկութիւններ ունի այս եթերը: Բնական է կազդէն մարմին մը կարծեմ զայն, առաւել կամ նուազ նման մեր մթնոլորտին, սակայն գիտունք իր յատկութիւններէն դատելով չա-

կայ. Մեծ Զօնը այդ հաստատած էր, տասնիններորդ դարն ալ ասոր մեծ յիշատակը կը թողու: Բայց ինչո՞ւ մարդիկ այս մէկ խաչեալը տեսան, ինչո՞ւ իրենց ձեռքը երկնցուցին այս մէկը ազատելու: Հո՞ն դժբախտ աղքատը, Հայ աղքատ խաչին վրան է, ձեռները գամուած, փուշէ պսակը ճակատին, արիւնը կաթ կաթ կը զլորի, զինուորը նիզակը կողը կը խրէ: Ծարաւին տեղը, «անօթի եմ» կըսէ ու անոր խոտ կուտան ուտելու: Եւ մարդկութիւնը, որ կը կեղծէ թէ խաչին զոհին կը հաւատայ, այսօր ամբողջ աղքատը կը թողու խաչին վրայ: Մի՞թէ Հայաստանը, այնտեղ ուր դարձաւ մըն էր, «Մատանայի» կղզիէն աւելի տանջարան մը չէ՞ դարձեր, մէկէ աւելի աղքատն է որ կը հիւծէ, ու մարդիկ կը լռեն, կը թողուն որ բարբարոս խուժանը բզկետէ զանի խաչին վրայ:

Նա սովորեցուց տոկալ Խաչին. այսօր ապացոյց մը ունինք, Խաչէն վերջ յաղթանակ կայ...

Վ. ՇԱՀԷՆԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ

Գաղթականութեան մէկ կարևոր մասը հոս մնալու սահմանուած է: Միացեալ Նահանգաց զանազան կողմերը հետզհետէ հաստատուն գործերու և տարիներու աշխատութիւն ու համարութիւն պահանջող ձեռնարկներու կըսկսին մեր հայրենակիցները,

փազանց առաձգական մարմին մը կը համարեն զայն:

Ուր որ աստղ մը շողայ հոն կայ նաև եթեր: Կայ լոյս, ուրեմն կայ եթեր: Այս համասփիւռ նիւթն է որ կը շրջապատէ աստղային ամբողջ միջոցն և հեռակայ աստղաց թերթուումներն կը փոխադրէ մեզ իբր լոյս: Եթերն եթէ սահման ունի, այդ սահմաններէն դուրս կրնան տակաւին գոյութիւն ունենալ աստղային մարմիններ, սակայն հոն գոյութիւնն անկարելի ըլլալով՝ անլոյս աստղեր միայն կրնան ըլլալ անոնք: Օդի սահմաններէն դուրս շատ նիւթեր կըրնան ըլլալ, կրնան ասոնք շարժիլ անդադար, բայց որովհետև օդ չկայ, որովհետև շարժում փոխանցող խաչ չգտնուիր, ձայն չեն կրնար արտադրել անոնք: Եթերէն դուրս ալ դեռ մեզ բոլորովին անծանօթ խաւար արեւներ կրնան վառիլ ու բորբոքիլ, շարժիլ ու թաւալիլ, և որոնք սակայն ներկայ պայմանաց տակ յաւիտեան անծանօթ պիտի մնան մեզ: Ղի լոյս փոխանցող խաչ չգտնուեր, եթերն է դարձեալ որ աստղաց ու արեգակնային լոյսին հետ ջերմութիւնն ալ կը փոխանցէ ու կը ցրուէ միջոցի տարածութեան մէջ: Այսպէս եթերն է որ կը պաղեցնէ գունդերն: Ուստի այն գունդերն որ եթերի սահմաններէն դուրս կը գտնուին՝ երբ անգամ մը տաքան, յաւիտեան նոյն ջերմութիւնն պիտի ունենան, բարեխառնու-

այս պարագան ապագայ Հայ գաղթականութիւն մը ցոյց կուտայ նոր աշխարհին մէջ Թիւրքիոյ բարեկարգութեան գործէն անկաս: Թէ այդ ապագայ սերունդը և որ աւելի կարեւոր է ներկայ անտուն ու անտէր գաղթականները պահելու, իրարու հետ կապելու, զարգացնելու համար Հայ մամուլ մը կարևոր է Ամերիկայի մէջ:

Մինչև հիմա այդ մամուլը գոյութիւն ունեցած չէ, պարբերական հրատարակութիւններէ զատ. լուրջ գիրք մը լոյս տեսած չէ և նոյնիսկ պարբերական թերթերը աւելի նմանութիւն կամ հետեւողութիւն եղած են արտասահմանի Հայ թերթերուն քան զուստ ամերիկահայ կեանքի արդիւնք:

Ամերիկահայ մամուլ մը պէտք է հոս, որ կրթէ մեր ժողովուրդը իր ներկայ նոր կեանքի պայմաններուն յարմարելու. այս երկիրը, օրէնքները, շահերը ճանչնալու, կեանքի խիստ մրցումին եռանդով և յաջողութեան հարկ եղած մտաւոր ուժերով մասնակցելու: Մամուլը Հայ բարձարը սոսկ Ֆիզիքալաւան ու միջնակցութեամբ աստիճանէն խելացի, ուշիմ և քիչ շատ դրամական ունեցող քաղաքացի մը դիւրբին բարձրացնելու է:

Շատ կարգացող տէրտէր կըլլայ մեր հասարակութեան ըմբռնումով, և իրաւ մեր Հին գրականութիւնը կը դերական է թէ ծագումով և թէ արդիւնքով, նոր գրականութիւնը անգործ երազողներ արտադրեց, պոստեցի գրչակներ: Ամերիկան գործնա-

թեան նուազում չկայ անոնց համար: Հալած աշխարհն միշտ հալած պիտի մնայ, զի իր ջերմութիւնը ցրուող ու նուազեցնող և զինք պաղեցնող խաւն կը պակսի: Կրնանք ասկէ հետեւեցնել թէ եթերն ինչ մեծ դեր խաղացած է մեր աշխարհի կազմակերպութեան մէջ: Առանց անոր անկարելի պիտի ըլլար մեր աշխարհին կարծրացումը:

Գրեթէ միշտ տեսանելի ուղիքն է անտեսանելոյն նկատմամբ: Աստեղային բոլոր անթիւ գունդերը ոչինչ են եթերի հետ բաղադատմամբ: Թէ նիւթոյ քանակութեան և թէ գրաւած տարածութեան կողմէն եթերն է տիեզերաց ամենէն գլխաւոր բաղադրուցիչ նիւթը, որ անհուն տարածութիւն կը գրաւէ: Զանազան լուսաբանել եթերին՝ լուսոյ ու ջերմութեան հետ ունեցած յարաբերութիւնն: Երեւակայեցէ՛ք լծակ մը որուն կեդրոնը հողմաղացի անիւներուն նման անիւ մը կը դառնայ, անշուշտ այս անիւն շուրջն ամեն ուղղութեամբ ալիքներ պիտի յառաջ գան: Դնենք թէ լուրջորդ մը լծակին եզերքէն սկսի դէպի անիւն լողալ: Նա պիտի զգայ անտարակոյս ալիքներու դիմադրութիւնն և որչափ մօտենայ անիւն այնքան ալ ալիքներն զօրաւոր պիտի ըլլան, և հետեւապէս կաճի անոնց դիմադրութիւնը: Բայց զնենք թէ անիւն վեր բարձրացնենք ջրին մակերեսէն, թէ և դառնայ այն, որովհետև ջուրին չգալիք, չկրնար

կան երկիր է, այդ երկուքն է ոչ մին հոս օգտակար կրնայ ըլլալ, այս երկրին յատուկ գործնական կեանքի յարմար դրականութիւն պէտք է մեզ.

Անգլիական լեզուն և մատենագրութիւնն անհուն գանձեր ունին մեր ժողովրդին անձնօթ, անգլիական աշխարհի հին և նոր պատմութիւնը քաղաքակրթութեան պատմութեան մի կարևոր մեծ մասը կը կազմէ: Մենք միայն Փրանսերէնէ թարգմանուած վէպեր, Փրանսերէնի վրայ ձևուած կամ գողցուած բանաստեղծութիւններ կարդացեր ենք, ժամանակ չէ՞ որ Ամերիկայի մէջ ուր այնքան անգլիագէտ երիտասարդներ կան լուրջ ջանք մը ըլլայ անգլիական հոյակապ գրականութիւնը հայ ժողովրդին ծանօթացնելու:

Այս ամենը թերթէ, խմբագրէ մը պահանջել արդարացի չէ, մամուլը՝ թերթով մը երկու երեք աշխատողներով չկրնար ստեղծուիլ: Ամերիկահայ մամուլը այն ատեն գոյութիւն կունենայ երբ գործներու մի խումբ կը կազմուի անոնց անհատութեան: Այդ աշխատութիւնը իր վարձքը իր մէջը ունի, մասնաւոր նիւթերու ուսումը, իրողութեանց հաւաքումը դպրոցի մը դասերէն շատ կը թիչ են: Եթէ ունինք իրաւ ուսումնասիր երիտասարդներ, ահա ապարէզ մը, միջոց մը թէ ազգին և թէ իրենց ծառայելու:

Մեր մէջ հասարակ բանաձև մ'է թէ մեր ժողովուրդն ընթացաբար չէ, բայց խնդիր է թէ միայն ժողովուրդն է ատր պատասխանատուն: Ընակահաւանքը, կրնայ սպառնալ թէ մեր թերթերու մեծ մասը անձնական վէճերով և աննշան խնդիրներով զբաղուելու համար հասարակութեան իրաւացի գաղափարին կամ անտարբերութեան տարակայ կը դառնայ: Մամուլի մը պաշտօնը կրկնակի է — թէ ընթերցողներու նիւթ մատակարարել և թէ նոր ընթերցողներ գտնել — այս երկուքին մէջ ալ թերացած է ամերիկահայ մամուլը:

Սիրելի է յուսալ թէ մեր երիտասարդ գրողները կամաց կամաց կընդարձակեն իրենց շրջանը, աւելի զարգացած և խոհուն արտադրու-

թիւններով Ամերիկայի հայոց թերթերը, ժողովրդական և յարգելի կը դարցնեն ուրիշ տեղերու հայ գաղթականութեանց մէջ, այն ատեն փոխանակ արտասահմանի թերթերը ապրեցնելու, մենք կունենանք մեր սեփական մամուլը:

Մ. Ս.

ՏԳԻՏՈՒԹԻՒՆ ԶԱՅՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ

Տգիտութիւն բառը շատ անգամ ականջներովս լսած ու շրթունքներովս արտասանած էի, սակայն անոր դառնութիւնը պէտք եղածին պէս զգացած չէի: Անցեալ օր, երբ երիտասարդ Պատ. Ալլէնը իր քարոզին մէջ հարցուց թէ՞ «ո՞վ էր հայոց իսկական թշնամին». մինչդեռ ես մտքովս «սուլթանի համար» կըռնէի, նա պատասխանեց թէ «սուլթանը թիւնն է հայոց ամենամեծ թշնամին», և բացատրեց: Ահա այդ ատենն էր որ տգիտութիւն բառը կրակէ նետի մը պէս սիրտս տաղեց և անցաւ. այդ ատենն էր որ անոր արհաւիրքներն և մեր ազգին մէջ գործած նախնիներն աչքիս առջև պատկերացան: Այս անգամ տգիտութիւն բառը ինծի համար բոլորովին նոր նշանակութիւն մը առաւ. կարծես գերեզմաններու սև ուրուականն էր այն: Այս հիասթափումով անդադարացայ մեր մօտիկ անցեալին, — արևելի տարիին, — և տեսայ թէ իրօք մեր գլխուն եկած բոլոր աղէտներուն գլխաւոր պատճառը տգիտութիւնն է եղեր: Եթէ մենք զիտակից ժողովուրդ մը ըլլալով պէտք եղածին պէս պարտաստուած ըլլայինք, — մտութիւնով և գէշնքով, — մենք ալ սուրի դէմ սուր, հրացանի դէմ հրացան և տապարի դէմ տապար կը վերցունէինք. մինչդեռ երբ աննշան կը շարունակէինք, կարծես մեր կըտարիներուն ձեռքերը կապուած էին, մեր երիտասարդներուն բազուկները վեր չէին վերնար, իբր թէ անոնց մէջ արիւն չըլլար: Անգիտակցութիւնը շարունակեց էր զայն, տգիտութիւնը շղթայած էր զանոնք:

պիտի ունենայ յաւիտեան: Գուցէ ընթերցողք խորհին թէ այս բոլոր գրուածներն ինչ յարաբերութիւն ունին անթիւ հեռագրի դիւարին հետ. մենք կը պատասխանենք թէ սերտ յարաբերութիւն ունին, ինչպէս պիտի տեսնենք այժմ: Ինչպէս ջերմութիւնն աւելցը, նոյնպէս ալ ելեքտրականութիւնն ու մագնիսականութիւնը, եթեքիտ տարբեր շարժումներն կամ ալիքներն են սոսկ իշական տարբերութիւն մը չկայ բնաւ ջերմութեան, լուսոյ, մագնիսականութեան կամ ելեքտրականութեան միջև: Մեր բնագիտական աշխատանքին մէջ կրնանք ելեքտրականութիւնը լուսոյ կամ ջերմութեան, իսկ մագնիսականութիւնը՝ ելեքտրականութեան փոխել, և փոխադարձաբար: Արդարեւ, այս չորս գործութիւններն ալ կրնանք իրարու փոփոխել, ամենայն դիւրութեամբ: Եթեքիտ տարբեր շարժումներն են միայն անոնք, տարբերութիւն կրնայ կայանալ սոսկ եթեքիտակեան մեծութեան կամ փոքրութեան մէջ, որքան որ է արբերութիւնն լուսոյ ու ջերմութեան: Եթեքիտ ոչ թէ միայն պարապութիւնն լոցուցաբ է, այլ նաև ամեն նիւթ: Մարմինները, օդը քարը, ջուրը, աննշմարելի մասնիկներուն միջև՝ աննշմարելի ծակտիկներ ունին, որոնք լոցուն են և թեթևաւ: Հեռագրի ուրիշ բան չէ, բայց եթեքով լոցուն թիւ մը: Հեռագրի այդ թե-

սպանդարարին առջև վիզը երկնցընող ոչխարի պէս անձիգ և անբողոք շարժուցանեք: Մեր այդ մարգիկը տասը տարուան մեռեալներու կը նմանէին. կարծես բոլորիս վրայ տարիներէ ի վեր մեռելի հող ցանուած էր, տգիտութիւնն էր այն:

Երիտասարդ եղբայրներս, ձեր խանդավառութիւններն մէջ երեւնի կըսէք. «Երթանք Հայաստան, ազատե՛նք Հայրենիքը»: Սակայն ի՞նչու, երբ զէնք գործածել չէք գիտեր. երբ ժողովուրդը պատրաստուելու հարկաւոր կըթուլիւնը չունիք, — չունիք և չէք ալ ջանար սորվիլ, անշուշտ բացառութիւնները միշտ յարգելի են. — ուստի կոչ կընեմ ձեր աշնիւ և հայրենասիրական զգացումներուն, որ փոխանակ ձեր պարագայ ժամերը անպէտ կերպով վատնելու, կարդալու, և վարժուելու պարտալիք. երբ կըթէք ձեր միտքը, երբ աշնուացնէք ձեր սիրտը, այն ատենն է որ մեծ գործեր կատարելու կարող պիտի ըլլաք:

Սիրելի քոյրերս, կարելի է դուք կը մտածէք թէ Հայրենիքի փրկութեան սուրբ գործին մէջ մեզ համար կատարելիք դեր չկայ. «մենք կին ենք, մենք աղջիկ ենք. ի՞նչ կուզայ մեր ձեռքէն»: Սակայն գիտութեան արևը թող ծագի մեր մտքերուն վրայ. կրթութիւնը ու դաստիարակութիւնը, այն ատեն մեր մէջ ջնջ ալ ժամ ճարքերն կըլինեն: Եթէ փրկարար օրը գայ և մենք չկրնանք սուր ու դրօշակ վերցունել, պիտի կարենանք վրիթակալի փաթեթներ ձեռքերնիս առնել, միայն մեր կըտրիճ եղբայրներուն. անոնց մարտի գոչներուն խառնել մեր հայրենասիրական երգերը, փաթեթելու անոնց վէճերը և խրատելու զանոնք:

ՏԻ Գ Ի Ս Ա. ՊԱՊՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՁԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐՏԻՆԻ ՄԷՋ

«Միշտէրի Հերբըլ» ի յունիսի թւայն մէջ կը կարդանք: — «Մերտի-

լերուն մէջ գտնուած եթերի ալիքներն են որ մեր լուրերը կը փոխանցեն երկրէ երկիր: Լուսոյ անըմբռնելի արագութիւնը կրնայ զաղափար մը տալ մեզ եթերի արագ արագութեան վրայ՝ զի լոյսին արագութիւնն ուրիշ բան չէ, բայց եթերի ալեաց արագութիւնը: Այս է պատճառն որ հեռագրի մէջ կանխարթի մէջ կըրնայ աշխարհի ծայրերն լուրեր հաղորդել: Ձայնը ինչպէս օդին մէջէն նոյնպէս հաստատուն օդին մէջէն ալ կը ճամբորդէ: Մանկութեան ժամանակ կը յիշեմ դպրոցը խաղալիք մը շինած էինք. երկար թիւ մ'էր այն՝ երկու ծայրերն գոգաւոր փոքրիկ պծակի մը մէջ հաստատուած: Մէկ ծայրը մեր բերնին կը մօտեցնէինք միւս ծայրն ալ ուրիշ մը ականջին կը դնէր և հեռուն կը կանգնէր: Այս միջոցաւ կրնայինք իրարու հետ խօսակցել, մինչ մեր զոյն կանգնողներն անգամ չէին կրնար մեր խօսակցութիւնն որոշ հասկնալ: Թելով հեռագրի ճիշդ այս ստեղծութիւնը կը նմանի: Մէկ ծայրը՝ ելեքտրական գործիքի մը միջոցաւ եթերի ալիքներ առաջ կը բերեն, որոնք թիւնն մէջէն կը ճամբորդեն ու միւս ծայրը հաստատուած ելեքտրական գործիքի մը միջոցաւ՝ այդ ալիքներն շարժման կը փոխուին և այդ շարժումները թուղթի վրայ յառաջ կը բերեն հեռագրի յատուկ գրերն:

էն մօտ ատեններս լուրեր հասած են, որոնք հալածանքներու վերակենդանանալը կը գուժեն. ներկայիս ատոնց պատճառները դեռ յայտնի չեն: Մերտիի Բարձրագոյն դպրոցի նախկին աշակերտներու մէջ կին կողմէն իր հօրը գրուած մէկ նամակը բռնուած է թուրք կառավարութեան կողմէ: Այս նամակը թարգմանուած և Տիգրանակերտի կառավարչին դրկուած է: Այնպէս կերեայ թէ թարգմանութիւնը կամ տգիտութեամբ և կամ շարամբտութեամբ եղելով թիւնները տարբեր ներկայացնելով նպատակ ունեցած է թէ՛ Մերտին և թէ՛ ուրիշ տեղ գտնուող շատ մը անձեր ևս մէջ խառնել. ասոնց կարգին կը գտնուին Մըստար Բնարըս մեր հին միսիօնարներէն մին, ինչպէս նաև Տիգրանակերտի բրիտանական հիւպատոսարանի թարգմանը: Երբ վալին բռնուած նամակին իբր թէ շիտակ թարգմանութիւնը կատարուած, Մերտինի Միւթէսարըֆին հեռագրելով կը հրամայէ ձեռքաւարել քոսն և եօթը հոգի, որոնք քաղաքական յանցանքով կը մեղադրուին: Կը տեղեկագրեն նաև թէ հեռագրերը կը հրամայէր Մըստար Բնարըսը ձեռքաւարելու համար ի հարկին բռնութիւն ևս բանեցնել և ան ալ նետել ներքին բանտը, որ սովորաբար դատապարտեալ ոճրագործներուն վերապահուած է, և հին թողուլ մինչև իսկ սուսնց ուէ փոքրիկ շնորհք մը ընելով անոր. Եւ որովհետև Մերտինը ամէնամօտ անգլիական հիւպատոսարանէն յիտուն մղօն, իսկ ամերիկականէն ալ աւելի հեռու է, Մըստար Բնարըս անմիջապէս Տիգրանակերտի հիւպատոսին կերթալ և ինքզինքը անոր պաշտպանութեանը կը յանձնէ: Հիւպատոսը հիմա կաշխատի նամակին մէջ շիտակ թարգմանութիւնը ձեռք բերել: Բոլորովին բացայայտ է, թէ ճշգրիտ թարգմանութիւն մը ձեռք բերուելուն պէս՝ այդ դատը ամբողջութեամբ պիտի չքանայ: Միացեալ Նահանգաց Կ. Պօլսի դեսպանն ևս այդ խնդրով հետաքրքրուած է և իր ամբողջ ուժով կաշխատի արդարութիւնը տեղը բերելու: Մըստար Բնարըս՝ ինչպէս ուրիշ բոլոր միսիօնարները՝ միշտ օրի-

ջէ փոխանցող ձայնի կը նմանի: Մէկ-ծայրը՝ ելեքտրական գործիքի մը միջոցաւ եթերի ալիքներ յառաջ կը բերեն, որոնք օդին մէջէն կը ճամբորդեն և միւս ծայրը հաստատուած ճիշդ առաջնոյն պէս հեռագրի յատուկ գրերն առաջ կը բերեն: Տարբերութիւնը սա է միայն, առաջինը թեւ ի միջոցաւ կը փոխանցէ թեւեւ ալիքներն և միակ ծայրի մը յանգեցնելու հոս միայն կ'արտադրէ հեռագրի յատուկ գրերն. իսկ անթիւ հեռագրին օդին մէջէն փոխանցելով եթերի շարժումները հեռագրի յատուկ գրերը կրնայ արտադրել ա մէկն տեղ ուր ուրիշ ելեքտրական գործիք մը կը դնենք: Լոնտօնէն փարիզ տրուած լուրն անթիւ հեռագրի միջոցաւ, նոյն ժամանակ կրնան Պերլին ալ աւելի: Գաղտնի լուրերը թեւով հեռագրի միջոցաւ կրնայ հաղորդուիլ: Վերջինս զոյն նամակի կը նմանի, մինչ անթիւ հեռագրի մարտիկը դաղանի լուրեր ունենան հաղորդուելիք՝ թեւով հեռագրի պէտքն ալ պիտի չպարտուի:

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

նապակ գտնուած են թուրք կառավարութեան, իսկ նամակ գրող երկուստարեւր բնա չը կրնար մեղադրուիլ: Այս տակնուվրայութիւնը մեծ սարսափ և անհանգստութիւն առաջ բերած է Մերտինի քրիստոնէից մէջ: Մեր այս տեղեկագրութիւնը պատրաստած ժամանակ ամեն ոք արահուսանքի մէջ է թէ արդեօք օրը ի՞նչ նոր բան պիտի բերէ: Ուսանողներէ մի քանին դպրոցը թողով դադարեցան իրենց հայրենիքը փախած են պահուելու համար, զգալով որ ընդհանուր ձերբակալութեան մը հրաման պիտի տրուի:»

ՈՐԲԵՐՈՒ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Դարձեալ նոյն թերթէն կը քաղենք: «Փաստօր Լօզման» Ֆրանքֆորտի Հայոց նպատամատոյց Ընկերութեան անդամներէն մին՝ որ վերջերս Թուրքիայի իր մէկ այցելութենէն վերադարձած է, մեր երկու միտնարութիւններն գէթ ուրիշացած է: Տօքտօր Բէյնօյսի լուրը կրկնած է, թէ գերմանացիք վանի մէջ 100 որբերու խնամքը կատարեն և Տօքտ. Բէյնօյս հեռագրով պատասխանած է, թէ ինքը իսկոյն այդ քանակութեամբ որբեր ևս պիտի ընդունի: Փաստօր Լօզման նաև կը համաձայնի 100 որբեր ալ Հաճընի մէջ խնամել: Մ. Մարթինի համար ասիկա բարի լուր մը պիտի ըլլայ, որուն ամիսներ առաջ հայոց Ազգային նպատամատոյց ընկերութիւնը 2000 սակիի օգնութիւն մը ըրած էր: Իսկ սա այս գումարը յատկացուած էր այնտեղի որբանոցներու գործը առաջ տանելու համար քան անգամ մը ազատուած փոքրիկները նորէն ընդօրնելը թողու: Ֆրանքֆորթի ընկերութեան քարտուղարը ամերիկական ընկերութեան քարտուղարին կը գրէ թէ, քանի որ գերմանացիք դժբաղդարար իրենց կառավարութեան օգնութիւն չեն սակիկներ Տիգրասի նակիտի և Բալուսի մէջ թուրք կառավարութեան կողմէ գոցուած իրենց որբանոցներու վերաբացումին համար, կը յուսան, որ Բրիտանական կառավարութեան յաջողութիւնը ամերիկական և անգլիական նպատակներով հոգացուած որբանոցներու վերաբացումին մէջ՝ իրենցիններուն ալ վերաբացումին կարգը պիտի բերէ: Այնպէս կերելի, որ երբ Տիգրասակերտի իրենց որբանոցները գոցելու հրաման ելած է, որբերը իրենց ամենալաւ հանգրծներն հազած լաւ կարգաբարձութեամբ մը քաղաքի այլևայլ անհատական տուններու մէջ են բաժնուած, ուր Տիգրասի կը շարունակէ տակաւին անոնց հոգ տանել: Տօքթ. Փոլ Բօզըպլան Պերլինէն Փաստօր Լօզմանէն առաջ թիւրքիայի հայկական բաժնին մէջ երկար ճանապարհորդութիւն մը կատարելով «Տէ Բրիտանիա» թերթին մէջ իր այդ այցելութեան վերաբերեալ յօդուածներու շարք մը կը տպէ: Կը յայտարարէ, թէ հայոց ցաւալի վիճակի մասին եղած մանրամասն տեղեկագրութիւններն իսկ նուազագոյն աստիճանով մը հաշուուած են: Անկարելի է ամենուն օգնել, բայց մանուկներէն, որոնք գէթ ազատուելու են: Հազարաւորներ ազատուած են թէև, սակայն ասոնք բիրտարներու քով շատ աննշան մաս մըն են:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՄԱՍԱՍՆԵՆ
Թարիք 15 մայիս, 99
Թարիքիցիները որոնք ընդունակ են իրենց պակասութիւնները, թու-

լութիւնները, անընդունակութիւնները և անտարբերութիւնը գէպի հասարակական գործիչը, ուրիշներու վրայ բարդել, զլիաւորարար իրենց առաջնորդները վրայ, և այս կերպով միշտ հայածած են իրենց առաջնորդները: այս անգամ կարգը եկած է Այվատեան եպիսկոպոսին, հազիւ թէ մի քանի ամիս է որ եկած է, կը մտածեն և կաշխատին թէ ի՞նչպէս կարելի է հեռացնել, հետևաբար Թուրքիի անվերջանալի առաջնորդական հարցը սկսած է տաք կերպարանք ստանալ: Ժողովուրդը և մի քանի միամիտ գրուներ կը պահանջեն Այվատեանէն, որ իրենց վերադարձնէ ասկէ տանեակ տարիներ առաջ պարսկահայերուն ունեցած խաղաղ վիճակը (!): Կը պահանջեն որ եպիսկոպոսը ձեռք բերէ ասկէ շատ տարիներ առաջ Ատրպատականի առաջնորդներուն որպէս թէ ունեցած ազդեցութիւնը, իրատուները և այլն:

Չենք կրնար շխտատուանիլ թէ Այվատեան եպիսկոպոսը չունի թող կողմեր, բայց այսպիսի մի տաքնապալից ժամանակ ի՞նչ կրնայ ընել առաջնորդ մը երբ Ամիր Նիզամի ալ չկայ: Այվատեան սրբազան իր դիրքը Պարսկաստանի մէջ աւելի բարձրացուցած պիտի ըլլայ, եթէ այս ու այն անձնաւորութեանց ազդեցութեան տակ չձգեր զինքը, աւելի անկախ կամ քով գործեր, ինչպէս իր նախորդը:

Ամիր Նիզամի մեկնելէն ի վեր դեռ նոր նահանգապետ եկած չէ: Մուհարրէմի սուգի օրերուն մէջ ըլլալով պարսիկ ժողովուրդը, ՔԸԻ՛ խաղաղապէս զբաղուած է իր կրօնական պարտականութիւնները կատարելու, հետևաբար հրապարակի վրայ դեռ այնչափ տաք և հրատապ խնդիրներ չկան: Հացի խնդիրը որ գրեթէ իր հին արժէքէն երբէք անկուս կրած չէ, հասարակութիւնն այնչափ չզրպոզեցնէ:

Սալմաստը որ օրէ օր աւելի թշուառութեան գիրկը կիյնայ, ժողովուրդը գէպի յուսահատութիւն առաջնորդած է: Ուրմիտի ասորիները ուսուցանուած թիւն ընդունած ժամանակ, շնորհիւ մի քանի անձնաւորութեանց ջանքերուն տեղւոյն հայերը մայրենի եկեղեցւոյ գրկէն չը հեռացան, կամ թէ օրթօթօթութիւն ընդունողներու թիւը շատ աննշան եղաւ: Այժմ կարգը եկած է Սալմաստին: Հաւթուան, Սալմաստի հայաշատ ու չէն գիւղը այժմ խնդիր տղաքն է և Ուրմիտէն ուսու եպիսկոպոս մը պիտի գայ անոնք մկրտելու: Միւս գիւղերն ալ տրամադիր են կրօնափոխ լինելու: Տեղը չէ՞ ըսելու կեցցեն մեր հայրուկները... Արսէն Յակոբեան երիտասարդ և զարգացեալ ուսուցիչն է Սալմաստի տեսուչը, քահանայ ձեռնադրուելով Այվատեան սրբազանէն Հաւթուան գնաց: Նորընծայ երիտասարդ քահանային ջանքերը ապարդիւն պիտի չանցնին:

ՆԱՄԱԿ ՖԻԶՊՈՒՐԿԵՆ

Բաղաբիտ միակ պայտ զլի գործարանին մէջ կաշխատին 25 ի չափ հայեր, ուր ծեր և բարի պոսի մը ձեռքին տակ կը գործէն նաև Գ. Թ., Զ. Պ. և Գ. Ա. անուն անձերն, ասոնք փոխանակ մտքի ճարպիկութիւն ցոյց տալու, աւելի լաւ միջոց ընտրած են եղեր՝ ընծայի անուան տակ՝ կաշառքով աչք մտնել, և անկից յետոյ մէկ մէկ աէրէ պէ կ'ի դարձած ալ առջի խնօք և

ժրջան գործաւորները չեն, ալ գովեստի պէտք չունին, միշտ ըստպատուութե՛ք՝ եթէ ոչ խնդիրը երևտն կը հանենք ըսելով, մարդը ուզած կողմերին կը քշեն: Բայց չփացած Գ. ը ալ այն աստիճանին կը հասնի որ խեղճ ծերուկի համբերանքը վերջ կը գանէ ու կըստիպուի զայն գործարանէն վճարել: Սա միւս երկուքի հետ խօսքերին մէկ ըրած, փաստարանի մը միջոցաւ, կը դիմէ գործատիրոջ և կը բողոքէ թէ ի՞նչ իրատուներով ինքը դուրս ձգուեցաւ: Կը պատասխանուի որ այդ պոսին գիտնալիք գործն է:

Մէկ սա էր մնացած պակաս, փաստարանով գործ ուղել, ալ ո՛ւր կը մնայ այն մեր երբեմնի ծագրած օտարազգի գործաւորներն, որոնք ամենայն հպարտութեամբ դուրս կելնեն երբ իրենց գործ չունին կըսուի:

Այն ատեն երբք ընկերները 800 տօլարի պահանջ մը կընէն պօսէն: Հոս դատարանը չէ կը պատասխանէ իրենց և միւս երկուքն ալ ամենաանպատիւ կերպով դուրս վճարուեցան գործարանէն: Այլ երևակայեցէք մնացած հայերուս վիճակը, վայրկենապէս լուրը տարածուեցաւ բոլոր գործարանին մէջ, ալ պօսերու հեզնական նայուածքը, օտար գործաւորներու հազարումէկ անարգական խօսքերն, որոնց չզարցում ունեցող մարդը չէր կրնար դիմանալ: Եթէ այսպէս շարունակուի շատերս որոշած ենք գործերնրս ձգել և հեռանալ: արդէն ալ հայ գործաւոր անունը գործատերէն արգիլուեցաւ:

Ինչո՞ւ չձանրանանք սա կաշառքի ստոր գրութեան վրայ, սա՛ իսկ ստրկութեան մէկ նշանը չէ՞, կաշառքի անճարակ և վատ սովորութիւնը հոս ալ միջոց ընտրել: Այլապէս կրնա լուծէն հեռու, հոս ալ պօս աղապէս կըստեղծենք մեզ համար: Գէթ ամչնանք օտարներու այն խօսքէն թէ՛՝ հայերը ինչ յիմար են, ֆիզիքական ուժին հետ ստակիին ալ վրայ կուտան: ամօթ է մեզ:

ԳՈՒԳԵՆ

ՆԱՄԱԿ ԼԻՆԷՆ

Լին 7 յունիս
Մաշթոց վարդապետը Պոտոմի և շրջակայից հովիւն է այժմ, Առաջին պատարագը՝ Լինի վճակուեցաւ: Երիտասարդ վարդապետը գործելու և օգտակար ըլլալու եռանդ մը կը ցուցնէ իր երակներուն մէջ, սակայն Պոտոմի և շրջակայից բազմաչայ ու ըմբոսնի իր ժողովուրդի մը հետ գործունէնալ ալ անտեղ ընկու չէ՞ ճերմակայեց գործնականութեամբ մեզ լծուած կիւղիք տեսնել զինքը վրեժնիքին հետ:

Ինչիւնը տեղւոյս Լի Կօլին մէջ Ազգ. Հոգաբարձութիւնը լսարան կազմեց՝ նպատակ ունենալով ժողովրդական գրագրարանի մը հաստատումը: Մաշթոց վարդապետը խօսեցաւ և բացատրեց գրագրարանին օգուտները ու անդպիր ժողովրդեան մը վիճակը: Պատ. Սանդիկեանն էր յաջորդ խօսողը, իր գուսարձալի բանաստեղծութեամբ միշտ ծիծաղը անչէջ պահեց ժողովրդի գէմքին վրայ: շօշափելի օրինակներով բացատրեց ընթերցման օգտակարութիւնը և գրագրարանի մը անհրաժեշտութիւնը: Յետոյ Պատ. Սաղաթանը հակիրճ բանաստեղծութիւն մը ըրաւ:

35 տօլար հաւաքուեցաւ հիմը դնելու ապագայ ժողովրդական գրագրարանի մը, թէև հիմը արդէն դրուած էր: Ազգ. Հոգաբարձութիւնը բանակցութեան մտաւ տեղւոյս շնչ. Կուսակցութեան վարդապետի

վարչութեան հետ որ կը յօժարի յանձնել իր գրագրարանը ժողովրդին, սա գլխաւոր պայմանով, որ իրենց 300 տօլար արժած գրագրարանի գէթ կէսին չափ գումար մը ժողովուրդը յանձն առնէ, գրագրարանը չգտնուած գրքեր բերելու: այն ատեն ամենայն սիրով պատրաստ են յանձնելու, որով ընդարձակ և նպատակայարմար գրագրարան մը հիմնուած կըլլայ քիչ ատենուան մէջ:

ԿԱՐԱՊ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Տէր Խմբագիր
«Տիգրիս» ի նախորդ թուոյն մէջ Տիգր. Գ. Պ. Չիթճեան մի նամակ հրատարակած է, ուրու մասին կուզեմ մի քանի դիտողութիւններ ընել: Նամակագիրն կըսէ որ Զէյթունի յանձնաժողովը միայն մէկ անձ ճանչցած է պատասխանատու և մի միայն մէկ անձէ հաշիւ առած է: սոյն յանձնաժողովը մի անդամն և միանգամայն քանձապետն ըլլալով այդ անձին ով ըլլալը չեմ գիտեր, զի այդպիսի պատասխանատուութիւն որեւէ մէկու յանձնուած չէր, եթէ այդպիսի պարտք մը ստանձնող կար գոնէ հաշիւ մը պիտի ներկայացնէր որ դիտարկէր և հրատարակէր, յանձնախումբս թէև չէր ուղեր այդ ներկայացման մանրամասնութեանց խառնուիլ, զայն ձգելով բոլորովին թատերական խմբին: սակայն երկամտական պատասխանատուութիւնն զեռ իր վրայ կը մնար: Տոմսերու տպագրութիւնը յանձնուած էր «Տիգրիս» ի տպագրութեան: որ նախկին սնօրինութեան կը պատկանէր, բայց սոմասկներն տպուելէ վերջ զանոնք յանձնուելու էին յանձնախումբին որ կնքելով կամ ստորագրելով շրջաբերութեան հանուէին, բայց ընդհակառակն, սոմասկներն զրկուած էին այլևայլ ազգայնոց որոյ զուցակն յանձնախումբիս երբէք չէ հասած, որ ուէ անձէ հաշիւ պահանջէ այդ մասին և ոչ ալ կրնանք Տիգր Չիթճեանէ հաշիւ պահանջել, բայց Տիգր Չիթճեան գիտէ թէ սոմասերն այդ կերպով ցրուողն յանձնախումբին հրամանով չէր ըրած *): Ներկայիւս էուզեմ յիշել ուրիշ որ դրամ ստացած եմ սոյն ներկայացումէն: Տիգր Բէլէկեանէ 12 տօլար, Տիգր Գըրպլըզեանէ 10 տօլար, Տիգր Չիթճեանէ 12 տօլար 25 ունիթ **), Արթ. Սաթ վարդապետէ 7 տօլար, Տիգր

*) Տիգր Հիւրմիւզ կուզէ ցուցնել թէ, թէև սոմասերու ընդհանուր հաշիւներուն պատասխանատու մը կար, սակայն այդ պատասխանատուութիւնը անպաշտօն կերպով առնուած էր:

Մենք մեր անունը այդ պատասխանատուութեան չենք զատեր վախնալով որ անոր մէջ զեղծում կայ, ոչ երբէք: ընդհակառակն կը յուսանք թէ յիշեալ իր հաշիւները կը հրատարակէ և մտքերու գոհացում կը պատճառէ: Կիմանանք թէ հաշիւները Տիգր Բէլէկեանի քով ձգուած է եղեր Այս մասին ուրիշ առթիւ աւելի կը գրենք:

**) Տիգր Հիւրմիւզ մանրամասնութեանց մտած չէ որ ըսեր թէ իրեն տուած հաշիւս յաջորդութիւնն է Տիգր Բէլէկեանի տանը տուած հաշիւիս, ուր «Տիգրիս» ի տպագրական պահանջը զեղջուեցաւ իմ քովս գտնուած հաշիւէն, և անկէ մնացորդ 7 տօլարին վրայ է, որ Տիգր Ե. Արսէնեանէ ստացածս 5 տօլար 25 ունիթ աւելցնելով իրեն վճարած եմ 12 տօլար 25 ունիթ 4

Գ. Պ. Զ

Մ. Թաշճեանէ 3 տօյար 75 սէնթ, Տիար Ոսկերիչեանէ, պուֆէթէ և սոմակներէ 11 տօյար և 12 սէնթ, Տիար Վարդմանուշակէ 5 տօյար 75 սէնթ, Տիար Թազուրեանէ (Տիար Զիթճեանի ձեռամբ) 16 տօյար և 25 սէնթ. ահաւասիկ ամբողջ ստացած գրամս, որ ընդհանուր գանձապետին յանձնուելով զրկուած է իր նպատակին. եթէ որեէ ազգային գիտէ որո ջով գրամ կամ տոմսակ ըլլալը մեզ իմացնէ, մեր գործը մասամբ պիտի դիւրացնէ:

Յ. Կ. ՀիւրՄիտ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնն ստացած է Մէրիտընէն ի նպատակ վանի սովելոց Տիար Պ. Կարտասարեանէ § 10, Հանգանակուած Հետեւեալ անձերէ. ինքը նուիրած է § 4, Կ. Մ. Ղարիպեան § 3, Մ. Ս. Նալպանտեան § 3:

Մ. Տօգուզեանէ § 1, 15: Գուսարը § 11, 15՝ որ կուղարկենք Ս. Առաջնորդին:

Հօմբընտի մեր գործակալ Տիար Ս. Թէրպիսին յանձնուած է՝ Թօմասեան § 1. Հ. Հայրանեան § 1, Չուրաճեան § 00, 50, Պ. Երևանեան § 1, Մ. Հ. Մարապօեան § 00, 50, Հայ մը § 1, Փ. Ս. § 1, գումարը § 6. առանց խմբագրութեանս զըրկուելու, պիտի զրկուի Ս. Առաջնորդին:

Տիար Զպուքճեան ի նպատակ վանի սովելոց «Տիգրիս» էն 50 օրինակ գնեց:

ՎՕՔԻԿԱՆԷՆ, Պ. Ա. Արամեան մեզ կը գրէ. — Հոս ի նպատակ սովելոց Հանգանակութեան ձեռնարկուելով 15—20 անձանց մասնակցութեամբ գոյացաւ § 77, 35, որ ուղարկուեցաւ Պօլիս Ս. Պատրիարքին:

ՆԵՇՈՒԱՆԷՆ Պ. Կ. Ա. կը գրէ. — Անցեալ կիրակի յանձնարարուած մը կազմուեցաւ հոս երեք ոնձերէ բաղկացեալ և ի նպատակ սովելոց Հանգանակութեան ձեռնարկելով Հաւաքեց § 84, որ պիտի ուղարկուի Պօլիս Ս. Պատրիարքին: Ամէն Հայ մասնակցեցաւ:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ե Ր

(Թայմըզէն)

Կ. ՊՈԼԻՍ մայիս 18. — Բ. Գուսարը որոշապէս կը հակառակի Ռուսիա ապաստանող Հայոց վերադարձին: Էրզրումի կառավարութիւնը առարկելով թէ ուէ Հրահանգ ստացած չէ Կ. Պօլսէն, ետ դարձուց առաջին իտմբը, որ 250 հոգիէ կը բաղկանար և որոնք անցեալ կիրակի սահմանագրուելու հասած էին: Սուլթանը կատէ ստոնց վերադարձը և ինչև անգամ պատրաստակամութիւն ցոյց կուտայ դրամապէս օգնել անոնց իրենց եղած տեղւոյն մէջ — Գայսինքն կովկասի:

— Սուլթանի երիտասարդ Թուրքերու մասին ունեցած նախազգացումները շատ շուտ իրականացան ստոնց կարծեցեալ ժողովատեղւոյն գտնուելովը, ուր շատ մը նշանաւոր անձեր, որոնց մէջ և իւլէմաներ կը յաճախեն եզերի Բազմաթիւ ձեռքախաղութիւններ եղած են:

Մայիս 20. — Ահմէտ Չէլալէտտին փաշա, սուլթանի գաղտնի ոստիկանութեան գլխաւորը, երկուշաբթի Բարիզ կը մեկնի բանակցելու Երիտասարդ Թուրքերու և Հայերու կուսակցութեանց հետ: Սուլ-

թանը իրիտ տիրած է, լսելով թէ երիտասարդ Թուրքերու առաջնորդ Ահմէտ Բիզան և Մինաս Չէրազ, որ բարձր նկարագրով և անկասկածաբար տէր մարդ մըն է, ևս ներկայ են Լա Հէյի մէջ:

— Հայոց Եմեսոփոխանական ժողովը, որուն ժամանակը կը լրանայ մայիս 31 ին, նոր ժողովի ընտրութիւն կը պահանջէ. սուլթանը կը ստիպէ զանոնք իրենց պաշտօնը շարունակելու, սակայն ստոնք կը մերժեն և Ազգային ժողովի գումարումով իրենց վերընտրութիւնը կը խնդրեն, որուն գումարումը սակայն սուլթանը չպիտի թոյլատրէ:

— Մայիս 20. — Սուլթանը անցեալ գիշեր Տիրան Բիչլէկեան անուն անձը, իբր մասնաւոր պատուիրակ զրկեց Լա Հէյ, ստուգելու համար Ահմէտ Բիզայի և Մինաս Չէրազի գիտատրութիւնները և անոնց հակառակ գործերու:

— Մայիս 22. — Պալատը կը հաւատայ թէ Ահմէտ Բիզա և Մինաս Չէրազ նպատակ ունին Լա Հէյի պատուիրակներուն հակոցնել թէ Համիտի կառավարութիւնը միշտ վրտանք մըն է խաղաղութեան և թէ իր գէշ Հետեւեալներն անխուսափելի են:

— Մօսկուա յունիս 5. — Այն Հայերը որոնք Ռուսիա անցած էին սահմանէն, ուսու կառավարութիւնը Հրամայեց է ամբողջապէս ետ վերադարձունել:

ՄԻՀՐԱՆ ԽԱՐՔՈՒԹԼԵԱՆ M. Harpootlian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը, իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաջալերեալ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած զոհողութիւնը չենք զըլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովրդեան և մասնաւորապէս մեր տան անձանցութեան իրական վստահութիւնն սալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՔՈՒԹԻՆ ԵՒ ԵՂՐԱՐՔ ԽԱՐՔՈՒԹԼԵԱՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւելքան 10,000 Օսմ. ոսկուոյ անշարժ ստացումը իր սոյն փոխադրի գործոյն երաշխաւորութիւնն է, յաշտ անոնց որոնք կուզեն դրամին վստահելի միջոցով զրկել: Ռուսի կը յուսանք թէ Հայ հասարակութիւնը չպիտի վարանի իբրև ապահովագոյն միջոցը մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակազրի տալ Խարքոյի, Տիգրանակերտի, Բիւրի, Բալուի, Բերքի, Մալաթիայի, Սեւազի, Կ. Պօլսի, նաև Տաճ, ըզրոր քաղաքաց համար. (ինձ դրամ զրկողներն ապահովագրութեան համար՝ նէշընը Պանթի չէք և կամ մընի օրտըր զրկելու են): Հայրենիքի մէջ ո' և է գործ տեսնելու կամ գործադրան օգնելու համար՝ պատրաստ եմ եղբօրս Թարութիւն էֆի. ձեռամբ կատարել տալ: Հեռագրով և նամակով գրամ և կամ նաւային թիքէթներ կրնամ զըրկել Մարսիլեայ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Պ Ա Տ Կ Ե Ր Ի Ն Ե Ր


(Մեր կեանքէն)

Գրեց

Վ. ՇԱՀԷՆԻ

Գիւնը 15 սէնթ: Բսան օրինակ գնողին մի օրինակ նուէր կը տրուի: Գիւմել հեղինակին խմբագրատանս,

V. Schaheni 301 E. 34 th. st. New York City



Գ Ե Ր Չ Ա Կ ՅԱՎՈՒ ՌԻՉՈՒՆԵԱՆ

159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ ածան հանգերձ կը փնտռէք, անանկ չէք. — մենք սուղ կը շինենք — բայց չէ. մեր գործին որքան ածան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց դրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զըջումը չեն ուզեր ո նենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելն ևս համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն ածան պատրաստի հանգերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր Հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

Լեոն Իսկեան անուն մարաշցի երիտասարդը. 30 տարեկան, սև պեխերով, երկարահասակ, ամիսուկէսէ ի վեր Ամբիկայի մէջ անհետացեր է: Կը խնդրուի ով որ տեղեկութիւն ունի ուր ըլլալը, իմացունէ խմբագրութեանս: Իր մայրը Հոս մեծ մտատանջութեան մէջ կը գտնուի: 2—2

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Նիւ Եօրք

Հայրենակիցներուս կը ծանուցանեմ թէ Պուլղուրի գործարան մը հաստատած եմ Ուեսթ Հօպքընի մէջ: Մեքենաներս նոր և մաքուր ցորեն կը գործածեմ, առանց հոտի և առանց քարի Պուլղուր պատրաստելու համար:

Փոքր քանակութեան համար գինն է փառուտը 2 1/2 սէնթ:

Հասցէ՝

A. Yazijian

53, Washington St.

որ է Տիար Տիրատուրեանի վարչութեան տակ:

Մեծ քանակութեամբ գնողներուս կարևոր գեղջ կրնեմ:

Գործարանին Հասցէն է՝

E. K. Mano 226—232 Clinton St. Hobocem N. J.

ՏԳԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետոմս, նամակազուրիս, հրաւիրագրեր, շրջաբերականներ, տետրակներ ևն.:

Մեր գները գոհացուցիչ են. տըպագրութիւնն մաքուր:

Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ի Չ

ՏԻԳՐԱՆ Ժ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Elite photo Studio

182 Main Street, Paterson, N. J.

Պատիւ ունիմ ծանուցանելու Հայ Հասարակութեան թէ յաջողած եմ ճօն և առաջնակարգ լուսանկարչատուն մը հաստատել Փէթրսըրի մէջ ուր կը բաւարանմ շայրենակիցներուս իրենց լուսանկարները հանել ստուլ, խիստ շափուտ գներով: Երկուր տարիներու փորձառութիւնն ուն մարհետախ քոլոր ճիւղերուն մէջ. պատկեր մեծցունել, բազմաթիւ, շրջանակ շինել և այլն:

Նիւ Եօրքէն ու Նիւ Ճրքիէն Կոլոնիերուն ճախուրտ տոմսերու գինը ևս կը վճարեմ:

Կը յուսամ թէ շատ Հայրենակցներ թէ շափուտ գներով խիստ գոհացուցիչ լուսանկարներ ունենալու: Թէ ամառանային զուարճալի ճամբորդութիւն մը ընելու և թէ մեզ քաջալերելու համար պիտի դիմեն մեզ:

Բոլոր կը ծախուին Հայրիկի, Իգմիլիանի և Մայր Հայաստանի լուսանկարները:

Մանրամասնութեանց համար դիմել ինձ նամակաւ կամ անձամբ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՐԻՆԳ



ԿԱՍ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԿՐԱՐԱՆ

Նիւ Եօրք, 1899

Հատոր Ա.

Կը պարունակէ 256 երեսներ և 16 գեղեցիկ պատկերներ: Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ և փառաւոր կերպիւ կազմուած:

Գիներն են. թղթակազմ (առանց պատկերի) 50 Սէնթ. թղթակազմ՝ 65 սէնթ. Լուսակազմ՝ 75 սէնթ. փառակազմ՝ մէկ օտար: Գիներն կանխիկ են: Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գեղջ կայ:

Գրել, կամ դրամ զրկել առ՝

H. Eakinian,

1158 I St, Fresno, Cal.

Կամ M. T. Pouroujian, 282 Jay St, Brooklyn, New York

Ս. ՏԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ

509 2րդ Ագիւ, 28 և 29րդ Փողոց:

Եթե տարիներէ իվեր հաստատած իրանի թիս մէջ գտած յաջողութիւնով կարող եմ շատ լաւ ապրանքներ տալ շատ ածան գնով՝ համոզուած ըլլալով թէ՛ ապահով շահին գլխաւոր միջոցն է յաճախողը գոհ ընել: Եթէ մեր ապրանքները գոհացուցիչ չըլլան՝ վճարուած գըրամը ետ կը դարձունենք: Մեր քով կը գտնուին ամեն տեսակ բանջարեղէններ, պտուղներ ու կիրակուրի վերարկեալ տեղակաւ կամ Արեւելեան ամեն կարգի նիւթեր, թիթեղեայ տուփերով կամ առանց տուփի: Մեր գներու մասին հետեւեալ նմոյշները կուտանք: Պուլղուր փառուտը 4 սէնթ. 25 փառուտէն աւելի գնողին համար 3 1/2 սէնթ: Մեծածած փառուտը 4 սէնթ, գէյթուն՝ 10 սէնթ, 10 փառուտէն աւելի գնողին համար 9 սէնթ: Մաքուր ալիւրի հային մէկը 3 և երկուքը 5 սէնթ: Կաթը քորթել 3 սէնթ: Հայկական գէյթունի իւղ, կորկոտ, կանանչ գէյթուն, պամիս, Փըստըրս, լէպլէպի, Անթիպ հալմասի ևն. կը վաճառենք. մեծ քանակութեամբ գնողներուն կարևոր գեղջ ընելով:

Նամակով յանձնարարութեան համար դիմել վերայիշեալ Հասցէին: